Մրցույթի մասնակցելու հրավեր

«20» օգոստոսի, 2014թ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) կազմակերպում է փակ մրցույթ (այսուհետ՝ «Մրցույթ») սանիտարական մաքրման ծառայություններ իրականացնող անձի ընտրության նպատակով:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ տարածքում պետական գրանցում ունեցող բոլոր անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են գործունեություն՝ սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ոլորտում և որոնք ունեն առնվազն 1 /մեկ/ տարվա աշխատանքային փորձ նշված ոլորտում:

Մրցույթը կկայանա Բանկի Գլխամասային գրասենյակում (ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեում) 25.08.2014թ., ժամը 16:00-ին:

Մրցութային հայտերը պետք է ներկայացվեն սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով՝ մինչև 25.08.2014թ., ժամը 16:00: Ուշացված հայտերը կմերժվեն:

Մրցույթի նկարագիրը և գների ներկայացման պայմանները

Մրցույթի շրջանակներում քննարկվում են Բանկի Գլխամասային գրասենյակի տարածքի սանիտարական մաքրման աշխատանքների կատարումը:

Մրցույթին մասնակցող ընկերությունների կողմից առաջարկվող գները պետք է ներկայացվեն՝ ըստ ներքոհիշյալ սանդղակների և տվյալների, հիմք ընդունելով մաքրվող տարածքների ընդհանուր մակերեսը:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գլխամասային գրասենյակի մակերեսները			
Անվանումը	**Քաղաք**	**Հասցե**	**Մաքրվող տարածքի մակերես ($մ^2$)**
Գլխամասային գրասենյակի ներսի տարածք	ք. Երևան	Նալբանդյան 48	4144.3
Գլխամասային գրասենյակի դրսի տարածք	Նալբանդյան 48	Նալբանդյան 48	298.62
Ընդամենը մաքրվող տարածքի մակերես			4442.92

Պահանջվող աշխատանքների ցանկ բոլոր տարածքների համար
Օրական կատարվող աշխատանքներ • Աղբի դուրս բերում և աղբամանների մաքրում • Գրասենյակների ամբողջ հատակի փոշեկուլով մաքրում • Բանկային դահլիճի հատակի լվացում • Աստիճանավանդակի և հարակից տարածքի մանրակրկիտ մաքրում • Բոլոր գրասենյակային սեղանների և պահարանների մանրակրկիտ մաքրում • Սանհանգույցների և խոհանոցների մաքրում • Ըստ պահանջի՝ Բանկի շրջակայքի, ետնաբակի տարածքի (եթե առկա է) մաքրում, այդ թվում՝ փոշուց, ձյունից, սառույցից և այլն:

Օրական կատարվող մաքրման և տնտեսական աշխատանքների համար ապահովել 6 աշխատող: Օրական կատարվող մաքրման աշխատանքները պետք է մատուցվեն ամեն օր՝ ըստ հերթափոխության ժամերի, բացի շաբաթ և կիրակի օրերից: Անհրաժեշտ է ապահովել պատասխանատու հերթապահների ներկայություն՝ Գլխամասային գրասենյակում՝ 2 հոգի: Հերթապահության ժամերն են. երկուշաբթի - ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-ից մինչև 18:00 առավոտյան- 07:00-ից մինչև 09:00 կամ երեկոյան - 18:30-ից մինչև 21:00: Հերթապահի պարտականությունների մեջ են մտնում աշխատանքային օրվա ընթացքում Բանկի Գլխամասային գրասենյակում սանհանգույցների մաքրության պահպանումը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, այլ մաքրման աշխատանքների կատարումը:
Բանկի բակը և հարակից տարածքը (այդ թվում՝Բանկի դիմացը՝ Նալբանդյան փողոցից)
Ամսական կատարվող աշխատանքներ • ընդհանուր տարածքների հիմնային մաքրում Ամսական կատարվող մաքրման աշխատանքների համար ապահովել անհրաժեշտ թվաքանակի աշխատողներ: **Աշխատանքները պետք է կատարվեն յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթ օրը:**
Ամիսը մեկ կատարվող աշխատանքներ • Բանկի արտաքին ապակիների մաքրում Ամիսը մեկ կատարվող մաքրման աշխատանքների համար ապահովել անհրաժեշտ թվաքանակի աշխատողներ: **Աշխատանքները պետք է կատարվեն յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթ օրը:**

Ըստ պահանջի կատարվող աշխատանքներ	
Առաստաղների մաքրում **նշել 1 մ^2-ի գինը**	
Բանկի փափուկ կահույքի քիմիական մաքրում **նշել գները աթոռի, բազկաթոռի, երկու և երեք տեղանոց բազմոցների համար**	

Գները պետք է ներկայացվեն ՀՀ դրամով, ներառելով բոլոր տեսակի հարկերը և պարտադիր վճարները:

Խնդրվում է նաև նշել, թե ինչպիսի զեղչեր կգործեն բանկի հետ համագործակցության մեկ, երկու և երեք տարվա պայմանագրեր կնքելու դեպքում:

Սանիտարական մաքրման ծառայությունների պայմանագրի գործողության ընթացքում Կատարողն իր կողմից տրամադրում է հետևյալ նյութերը՝

փոշեկուլներ, հատակի լաթ, հատակ մաքրելու ժամանակակից հարմարանք, փոշու մաքրման ջնջոց, կահույք մաքրող նյութեր, սանհանգույցների, զուգարանակոնքերի ախտահանող և մաքրող նյութեր, զուգարանների մաքրման համար խոզանակներ, խոհանոցային սպասքի լվացման նյութեր և պարագաներ, ընդհանուր մաքրման համար անհրաժեշտ այլ նյութեր և պարագաներ: Ընկերությունը պետք է տեղեկացնի իր կողմից առաջարկվող բոլոր մաքրող նյութերի մակնիշը և արտադրման երկիրը և օգտագործի բացառապես ներկայացված նյութերը պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

Սանիտարական մաքրման ծառայությունների պայմանագրի գործողության ընթացքում Կատարողի կողմից պետք է մատակարարվեն հետևյալ նյութերը՝ հեղուկ օճառ, թղթյա սրբիչներ, զուգարանի թուղթ:

Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք պարտավոր են Բանկ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

- մրցույթի մասնակցի անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեները, հեռախոսահամարները (Հավելված 1),
- պետական գրանցման վկայականի պատճենը,
- համառոտ տեղեկատվություն ընկերության գործունեության մասին՝ ներառյալ՝ գործունեությունը սկսելու տարեթվի և տեղեկության, թե ինչ ընկերությունների հետ է համագործակցում մրցույթի մասնակիցը (Հավելված 2),
- այլ անհրաժեշտ տեղեկություններ (Հավելված 3.1 , Հավելված 3.2),
- Պահանջվող աշխատանքների վերաբերյալ կոմերցիոն առաջարկ, ընդգրկելով աշխատանքների 1 մ^2-ի միջինացված գինը մեկ ամսվա համար, ինչպես նաև աշխատանքների ընդհանուր արժեքը՝ ամբողջ մաքրվող տարածքի համար (Հավելված 4):

Մրցույթի բոլոր նյութերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մրցույթում ծածկագրեր չեն կիրառվում:

Մրցույթը կանցկացվի Բանկի Գլխամասային գրասենյակում (ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեում):

Մրցութային հայտերը ամփոփելուց հետո Բանկն յուրաքանչյուր մասնակցին գրավոր կտեղեկացնի մրցույթի արդյունքների վերաբերյալ:

Հաղթողի վերաբերյալ վերջնական որոշում կկայացվի՝ հաշվի առնելով նաև այլ գործոններ (այլ ընկերությունների համար կատարված նմանատիպ աշխատանքների փորձը, առաջարկ ներկայացրած կազմակերպությունների վարկանիշը, Բանկի հետ ունեցած փոխհարաբերությունները և այլն):

Մրցութային հանձնաժողովը իրավունք է վերապահում ներկայացված առաջարկներից և ոչ մեկը չընդունել:

Մրցույթի Մասնակիցն իր հերթին պետք է տրամադրի կոնտակտային անձի վերաբերյալ տեղեկատվություն, որը լիազորված է պատասխանելու առաջարկի վերաբերյալ ծագած հարցերին:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ, Գործերի կառավարչություն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեով կամ զանգահարել +37410 59 20 21 հեռախոսահամարով: